

ԲԱՌԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԻՄԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐՈՒՄ

Ս. Ա. ԱՎԱԳՅԱՆ

Միջին դարերի վիճադրական հուշարձաններում ավանդվել են բազմաթիվ նոր բառեր ու տերմիններ, որոնք չեն վկայված ժամանակի մատենագրության մեջ և կարևոր տվյալներ են պարունակում հատկապես միջնադարյան Հայաստանի ներքին կյանքի, սոցիալ-տնտեսական իրավիճակի, գոյություն ունեցած հարկային-պարհակային համակարգերի, մշակույթի ու լեզվի ուսումնասիրության համար:

Այդ տերմիններն ունեցող վիճական բնագրերը մեծ մասամբ նախկինում վերծանվել են էական անճշտություններով, որ զգալի չափով դժվարացրել է նրանց հավաստի ստուգաբանությունն ու մեկնաբանությունը և մի շարք դեպքերում նյութ տվել զանազան անիրական պատկերացումների: Վկայությունների մի մասն էլ ցարդ ընդօրինակված չլինելով, չի մտել գիտական շրջանառության մեջ և անծանոթ է հայագիտությանը:

Ստորև ներկայացնում ենք վիճական բնագրերում փորագրված մի քանի տերմինների նոր մեկնություններ, զուգընթացաբար ճշգրտելով նրանց առկա վերծանությունները:

Ա. ԽԱՐԱՃ (= ԽԱՐՃ, ԽԱՐՋ), ԽԱՐՋՈՂ (°)

Այս դրությամբ բառս վկայված է մինչմոնղոլյան և մոնղոլական շրջանի մի քանի վիճական արձանագրություններում, որոնք նախկինում հրատարակվել են զգալի անճշտություններով: Մեջ ենք բերում այդ բնագրերի համապատասխան մասերը մեր ուղղումներով. առաջին վկայությունը աթաբակ Իվանեի և Խոշաքի արտոնագրում է՝ փորագրված Շիրակավանի տաճարի պատին ՈԶ (1231) թ. Ես՝ աթաբակ Իսան է և Խոշաքս, վերաբերյալ տալիս Վրաց և Հայոց և նովին թագոսի... թողաք գխարան ջաղաց Վերի Շիրակուանի¹:

Հաջորդը գտնում ենք Սմբատ Օրբելյանի նվիրագրում, որ նա թողել է Դադի վանքում, ՉԺԴ թվականին. Ես՝ Սմբատ իշխանս... գնեցի գեղեցիկաց արքայի և յեղեգիս իմ գնած ձիթահանքն և արքայի ըստ կարի և գեղեցիկաց արքայի, որ հաստատեցի ամեն խաբանվն անշար և Ետու սբ Կաթողիկէս²: Բառի վերջին հիշատակությունը գտնում ենք Աշտարակի Մարինե հուշարձանի ՉՀԲ թվակիր նվիրագրության մեջ, որի բնագիրը անճանաչելի աղավաղված հրատարակվել է Շահխաթունյանցի գրքում, այնտեղից անփոփոխ՝ Վիճական

¹ Ն. Սարգիսյան, Տեղագրությունք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 170—171:

² Մ. Տեր-Մովսիսյան, Հայկական երեք մեծ վանքերի եկեղեցիները և վանական շինությունները, Երուսաղեմ, 1938, էջ 96:

տարեգրում», ուստի տալիս ենք մեր ավելի իրական ստուգելի ընդօրինակությունը.

...որ գ: Ա: էլ կեսն ես ավի ու իյամենայն հարկէ ազատեցի, շունի ոչ ով դաւի, ոչ շարի, ոչ շարիատի, ոչ էլ մեծ կամ փոքր խարնի: Ով զմեր հաւատաւ յիշատակս խաբանել ջանա..., և հետեւում է անեծքի ձեւակերպման շարունակությունը: Այս և մատենագրական մի քանի այլ վկայությունների (Մխիթար Անեցի, Վարդան Վարդապետ, Սամուէլ Անեցի և այլն) հիմամբ խաբան, խարն բառը ստուգաբանված է և բացատրված գրականության մեջ, ըստ Աճառյանի, օրինակ, խաբան ծագում է արաբ. *ḫaraḡ* գլխաճարկ բառից:

Տարակարծություն է առաջացրել միայն խաբան հարկի բովանդակությունը, նրա ինչ հարկ լինելը, ըստ որում գլխաճարկ ստուգաբանական բացատրությունը ընդունելի կարելի է համարել միայն Սասանյան և արաբական տիրապետության նախնական շրջանի համար: Հետագա դարերում, սելջուկյան և մոնղոլական տիրապետության տարիներին խաբանը արդեն գլխաճարկ չէ, այլ հիմնական հոգային հարկ, որ գանձվում էր կամ պետության, արքունի դիվանի, կամ տեղական կալվածատեր-իշխանի օգտին, ըստ այդմ, միայն հայկական աղբյուրներում հայտնի են այդ հարկի երկու տեսակները՝ մեծ խաբան և փոքր խաբան:

Նշելի է նաև, որ խաբան, խարն բառը միջնադարյան մի քանի այլ հարկային տերմինների նման (բաժ, շար, տամղա և այլն) երբեմն կարող է գործածվել նաև ոչ կոնկրետ հարկի կամ տուրքի նեղ իմաստով, այլ իբրև ընդհանուր, վերացական հարկ, հասույթ հասկացություն: Այդ նշանակությամբ է գործածված խաբանը Շիրակավանի բնագրում՝ գլխաճարկ շաղջազ (<ջաղաջ), որ հավանաբար պետք է հասկանալ ջրաղացների եկամտաճարկ, ամսաառուֆ, այլ արձանագրություններում հիշատակված է նաև մահկանա, դանեկ անվանումներով:

Վերջին ժամանակների պատմագիտական մի քանի ուսումնասիրություններում առանձին, ինքնուրույն հարկային կամ տուրքային տերմին է հասկացվել նաև Աշտարակի Մարինն հուշարձանի՝ մեր հիշատակած արձանագրության մեծ կամ փոքր խարնի տառաշարքը, որ հետազոտողները քաղել են Հ. Շահ-խաթունյանցի՝ մեծ կամ փոքր խարնո՞ղ անխրական ընդօրինակությունից: Նույն կապակցությունը Ալիշանը դատողության ուժով ուղղել է մեծ կամ փոքր խարն, առանց սակայն պարզելու տերմինի բովանդակությունը³:

Առաջինը այս տերմինը քննում է Հ. Մանանդյանը. թվարկելով իլխտնական շրջանում Հայաստանի բնակչությունից հավաքվող հարկերը, նա դրանց շարքում տեղ է տալիս նաև խարնո՞ղ մեծ և փոքր տուրքին. որ, նրա կարծիքով, հոգանարկի կամ եկամտաբեր անշարժ գույքերից վերցվող հարկի նշանակություն ունի տվյալ պայմաններում⁴: Գրեթե նույն մեկնությունը, առանց խարնո՞ղ բառի քննության, տալիս է և պրոֆ. Ս. Հակոբյանը⁵, իսկ պրոֆ. Բ. Առաքելյանը ընդունելով Հ. Մանանդյանի կարծիքը մեծ և փոքր խարնո՞ղ հարկի

³ Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 186:

⁴ Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1952, էջ 282:

⁵ Տե՛ս Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հ. 1, Երևան, 1956, էջ 382, 465:

մասին, աշխատում է տերմինի ստուգաբանությամբ հաստատել ադ վարկածը, ըստ այդմ հեղինակը Աշտարակի արձանագրության մեծ կամ փոքր խարճեղ կարծեցյալ հարկը համեմատելի է համարում պարսկական իխրաօսթ վա խարջիաթ ինստիտուտի հետ, որ զինվորականության ու պետական պատնյաների պահպանության համար գանձվող հարկ էր⁶:

Այսպիսի բացատրության համար անհրաժեշտ հիմքեր չեն տալիս ոչ օտար և ոչ էլ հայ աղբյուրները և այն առաջանում է հիշյալ արտոնագրի ոչ իրական ընդօրինակությունից:

Աշտարակի Մարինե եկեղեցու վերոբերյալ արձանագրության մեր վերծանությունից ակնհայտ է դառնում, որ այստեղ մեծ կամ փոքր խարճեղ կարծեցյալ հարկային տերմինը չի կարողացվում և այն արդյունք է բնագրի այդ հատվածի ոչ ստույգ վերծանության և բառանշատման: Շահխաթունյանցի դրբում և Վիճական տարեգրում⁷ բնագրի համապատասխան մասը հրատարակված է... ոչ շարիատ, ոչ էլ մեծ կամ փոքր խարճեղ..., մինչդեռ իրականում փոքրագրված է. չունի ոչ ով դալի ոչ շարի, ոչ շարիատի, ոչ էլ մեծ կամ փոքր խարճի: Այստեղից պարզ է, որ խարճեղ տառաշարքը առաջացել է խարճ բառից և հաջորդ՝ ով զմեռ հաստատ յիշատակս խաբանել ջանա... նախադասության ով-ի միացումից, ըստ որում՝ վերջինիս վ-դիրը դ-է կարդացվել (խարճ-ով>խարճեղ):

Հարկ է նշել, որ վիճական արձանագրություններում միշտ չէ, որ խարճ բառը հարկային տերմինի նշանակություն ունի: Նույն ժամանակների մի քանի բնագրերում այն արտահայտում է նաև սովորական ծախս, ծախսում բառի իմաստը, այսպես Մրենում, Սահմադինի պալատի կառուցման արձանագրության մեջ Սամտինը, թվարկելով կատարված աշխատանքները, վերջում նշում է ծախսված գումարի չափը. ու խարճ. ու եղալ դարապալսիս: Խ. Ռ.: դուկատ դահեկան⁸: Կամ Հոռոմոսի վանքում, Թաիկ թագուհին վանքին է նվիրում Աբելի աղը (ջրաղաց), զոր իմ ուղին Հագրպեկն ի Գարեգոյնէն գրաւկենց: Է: Ճ: Սպ., Բ: Ը: սպ. ի վերա խարճ արաւ, ու եղաւ: Ռ: Ծ: սպ⁹: Հասկանալի է, որ այս օրինակներում խարճը արդեն հողային կամ ուրիշ հարկ չէ, այլ շինարարության կամ նորոգման վրա կատարված ծախս: Թվում է, այս իմաստն ունի խարճը նաև Դագի վանքի վերը նշված արձանագրության մեջ՝ ու հաստատեցի ամեն խարճովն անշար, թեև մի շարք պատմաբաններ այստեղ ևս խարճը հարկ են համարում⁹:

⁶ Տե՛ս Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում, հ. 2, Երևան, 1964, էջ 221:

⁷ Հ. Ա. Օրբելի, նշվ. աշխ., էջ VI, Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պրակ Ա, Երևանում, 1935, էջ 14:

⁸ Ն. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 158, Վիճական տարեգիր, էջ 112: Վանքին նվիրված ջրաղացի վրա կատարված ծախսերի թվաբանությունը, որ Թաիկը մեջ է բերում նրա արժեքը ցույց տալու նպատակով, ստույգ չի հասկացվել վերծանողների կողմից: Պետք է կարծել, որ Հագրաբեկը Դարեգոյնից ջրաղացը գրավ է վերցրել 700 (է. Ճ.) արծաթ դահեկանով, վրան ծախսել է 800 (ը:Ը) դահեկան, ուստի և ջրաղացի արժեքը կադում է 1500 (ու. Ծ.) սպիտակ: Պրոֆ. Ս. Հակոբյանը այստեղ հիշատակված խարճը դրամական հարկ է համարում, Հոռոմոսի վանքի այս նվիրատվական բնագիրը մեջ բերելով իբրև ապացույց, որ միջնադարում «գյուղերը հարկերի մի մասը վճարել են դրամով» (Տե՛ս Ս. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 464—465):

⁹ Տե՛ս Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 282, Ս. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 382, 465:

Բ. ԼՄՆԵՑԻՆ

Այս բայաձևը (անց. կատարյալ ժամ., հոգնակի թիվ, երրորդ դեմք) վկայված է վայոց ձորի Ամաղու նորավանդում, Տարսայիճ Օրբելյանի ընդարձակ կալվածագիր-նվիրագրության մեջ, որ փորագրված է Սմբատ իշխանի դամբարանի հյուսիսային պատին, հավանաբար ԶԻԴ (1275) թ.: Բնագիրը զանազան տարրնթերցումներով հրատարակվել է մի քանի անգամ, սակայն քրն-նության առարկա բայաձևը բոլոր դեպքերում ընդօրինակված է ստույգ՝ լմեն-ցին: Համապատասխան հատվածը քաղում ենք Ս. Բարխուդարյանի վերջերս հրատարակած ժողովածուից... ու ինչ գեկեղեցին լմենցին, խիլայ կուտայաֆ: Շ: սպիտակ է այն խիլային փոխան զԱղագար Ըղուերծեցին տվաֆ՝ նրայ հայ-րէնիֆ լինի, ի նրայ գեղին կայ յազգէ յազգ...¹⁰: Նախ, առաջին նախադասու-թյան լմենցին և կուտայաֆ բայաձևերի կազմության կամ ձևաբանական բնու-թագրման մասին: Հրատարակիչներից միայն ՎԱԿ-ի հեղինակներն են պար-զում նրանց նշանակությունը տվյալ հատվածը թարգմանելով՝ пока завер-шали постройку церкви (ինչ գեկեղեցին լմենցին), мы плотили хила 500 белых¹¹ (խիլայ կուտայաֆ, Շ: սպիտակ), որ երկու դեպքում էլ զգա-լապես հեռացած է բնագրի իրական բովանդակությունից: Ինչ գեկեղեցին լմենցին պետք էր թարգմանել Когда построили церковь (по построй-ке), քանի որ ինչ բառը նույն ժամանակի այլ արձանագրություններում և միջին հայերենում արտահայտում է երբ, հենց որ, երբ որ (когда) ժամա-նակի մակբայի իմաստ:

Ինչ բառի այդ իմաստով գործածվելու հնագույն օրինակը գտնում ենք Արուճի տաճարի 987 թ. մի աղտոնագրում. Յանուն այ, ինչ թուական ՆԼԶ, ես՝ Սմբատ շանանշան... և այլն: Ահենբե է, որ այստեղ ինչ պետք է հասկանալ երբ, երբ որ և տվյալ հատվածը թարգմանել՝ Յանուն այ, երբ թվականը ՆԼԶ (էր) և այլն¹², նույն կիրառությունն ունի ինչ բառը նաև Բագնայրի ԶԺԱ (1262) թվականի նվիրագրության հետևյալ հատվածում. ինչ իմ պապն մեռաւ, ես՝ Խաւազ իմ կնոջն զբաժինֆն ակն ու մարգարիտ իմ պարունին տվի: Քննվող կապակցությունը Մ. էմինը ստույգ թարգմանել է՝ по смерти моего деда¹³:

Այսպես շտկելով ինչ բառի նշանակությունը տվյալ նախադասության մեջ, ավելի դրույին է պարզել նաև լմենցին բայաձևի ստույգ քերականական իմաս-տը՝ ավարտեցին վերջացրին, ըստ այդմ, մեջ բերված հատվածի առաջին նա-

¹⁰ Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, պրակ III, Երևան, 1967, էջ 234—235:

¹¹ Материалы по археологии Кавказа, М., 1916, стр. 184.

¹² Բնագիրը գիտական հրատարակություն չունի. առաջին ընդօրինակող Հ. Շահաբուն-յանցը ինչ թուական ՆԼԶ վերծանել է. ի... թուական ՆԼԶ, Ալիշանը դատողության ուժով վերա-կանգնել է ի (Հայոց) թուական ՆԼԶ: Վերջերս Արուճի սույն բնագրին անդրադարձել է նաև Ա. Շահինյանը. նա պարզ երևացող ինչ գրերը կարդացել է Ի Ն Զ և այստեղ դիտում է փո-րագրողի վրիպում, որ թվականը ՆԼԶ-ի փոխարեն սխալմամբ ՆԶ է քանդակվել և ապա շարու-նակության վրա ուղղել իր սխալը: (Տե՛ս Հ. Շահաբունյանց, նշվ. աշխ., էջ 61, Ալիշան, Այրարատ, էջ 144, Ա. Շահինյան, Արուճի VII դ. տաճարի շինարարական արձանագրության վերծանման առթիվ («Արարներ», 1971, № 1, էջ 83):

¹³ Н. Эмин, Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего, М., 1881, стр. 67.

խաղասոթյունը կարելի է հասկանալ՝ երբ (հենց որ) եկեղեցին ավարտեցին (վերջացրին) (когда построили церковь): Ստույգ չի թարգմանվել և մյուս նախադասությունը՝ խիլայ կուտայաֆ Շ սպիտակ, և դրա պատճառը կուտայաֆ անորոշ բայաձեն է, կու եղանակիչով միակ բայը հայ վիճագրական հուշարձաններում: Էմինի թարգմանած ПЛАТЯНИ ХИЛЭ ոչ մի չափով նույնական չէ խիլայ կուտայաֆ-ին: Իվում է այս բալտական կու մասնիկը I դեմքի բայաձեի հետ արտահայտում է ոչ թե ներկայի, կատարվող գործողության իմաստ, այլ ապառնիի, կատարելիի, ըստ այդմ՝ տվյալ իրադրության մեջ կուտայաֆ (անց. անկատար՝ տայաֆ + կու = կուտայաֆ) կարող էր նշանակել՝ պիտի տային: տալու էին:

Ասվածից հետևում է, որ Տարսայիճ իշխանի կալվածագրի քննության ենթակա բարդ նախադասությունը պետք է թարգմանել. երբ (հենց որ) եկեղեցին ավարտեցին, պետք է տային 500 սպիտակ պարգև (տալու էին), այն պարգևի փոխարեն տվեցին Աղագար Ըղուերծեցուն... և այլն:

Հին դրական հայերենում լմնեցին ձևն անծանոթ է, նրա փոխարեն գործուն է նույնիմաստ լնուլ = լցնել բայը (լցի, լցեր, լից), որ երկու դեպքում էլ առաջանում է միևնույն լի արմատից: Լմնեցին անցյալ կատարյալ ժամանակի բայաձեի անորոշ դերբայը վերականգնվում է լմնել, որ նշանակում է կատարել, ավարտել, գործարկել, վերջացնել և հզակի վկայությամբ հիշատակում է վարդանի «Պատմության» ժողովրդախոսակցական լեզվի տարրերով հարուստ նշանավոր հատվածում՝ եւ հրամայեաց, թէ առաջի օրն զքո խօսքի լմնեցի¹⁴, որտեղ լմնեցի նշանակում է կատարեցի: Լմնել առաջանում է լման = ամբողջ (լի արմատից, ման մասնիկով) բառից, որ գործածական է «Կ» ճյուղի մի քանի բարբառներում (Պոլիս, Ռոդոսթո, Զեյթուն, Մարաշ և այլն) և նշանակում է ամբողջացնել, լրացնել, ավարտել¹⁵:

Գ. հոն

Հին հայերենի գրական հուշարձաններում այս արմատը չի հանդիպում: Միջին հայերենում բառս խեչ գրությամբ մի քանի իմաստներ է արտահայտում. ա) իսաղողի վաղի նեցուկ, սյուն, նոր բարբառներում՝ խեչակ, խեչմայր, որ առաջանում է գրաբարի խաչ, խաչել բառերից (վիճագրերում նաև՝ խայչ > խէչ) ձայնավորների հերթագայության օրենքով. բ) խեչ լայն կիրառություն ունի իբրև անիսկական կապ. մոտ, քով, մերձ, կից նշանակությամբ. այսպես, «Վաստակոց գրքում», թե կանեփի կանաչ ցախն ի խեչդ պահես (մոտդ պահես), մեջեիս ի քեղ շմերձենայ, կամ. ա՛ռ սոխ մի, կեղևե՛ա և հեղե՛հ՛ա, և ի վերայ պուրտոյն դիւր, խեչ տօշբերանին, օգտէ¹⁶:

Վիճական արձանագրություններում բառս վկայված է Բագնայր տաճարի ՈԶՐ (1233) թ. նվիրագրում, որ գիտությանը հայտնի է ն. Սարգիսյանի անստուգելի ընդօրինակությամբ, հետևյալ կապակցության մեջ. զերդ որ խաչէ-րեսն՝ Վարդին որդին ի քս փոխեցաւ եւ զիւր զանձով շինած տներն ի Գաղտ

¹⁴ Վարդան Վարդապետ, Հավաքումն պատմության, Վենետիկ, 1862, էջ 158:

¹⁵ Է. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Երևան, 1930, էջ 202—203, Դավառական բառարան, Թբիլիսի, 1913, էջ 429:

¹⁶ Գիրք վաստակոց, էջ 105, 208:

դռանն խեչ երեւ ի սուր Մայրս լուսոյ, ապա դռնն ժամանակի հանդիպեցաք
սովն եւ սրն եւ գերութեան, ծախեցաք...¹⁷: Առաջին հայացքից պարզ և դուր-
ըմբռնելի թվացող այս հատվածը հետադուտողների մոտ տարբեր կերպ է հաս-
կացվել, անորոշ է համարվել մանավանդ ի Գաղտ դռանն խեչ երեւ կապակ-
ցութիւնը: Մ. էմինը ընդհանուր առմամբ ստույգ թարգմանելով հատվածը,
խեչ բառը անհասկանալի է համարել և բաց է թողել¹⁸: Ն. Մառը Վիմական
տարեգրի հայտնի առաջաբանում հատուկ քննության ենթարկելով բնագիրը,
առարկում է այս վերծանության դեմ և գտնում, որ խեչը նվիրատու խաչերեսի
անվան հապավումն է, ըստ այդմ հեղինակը առաջարկում է նույն քաղվածքը
վերծանել. на свои деньги купленные дома у Потаёного входа Хеч
(Хачерес) дал сей святой матери: Ն. Մառը խեչ = խեչերես մեկնությունը
որոշ վերապահությամբ տալով, տողատակում հնարավոր է համարում խեչ
բառը հասկանալ նաև խաչ իմաստով (բառի մեջ ա < ե, ե փոփոխությունը
այժմ էլ դիտվում է Հոռու և Նոյեմբերյանի խոսվածքներում. (հմմտ. խեչ,
սրփխեչ < սուրբ խաչ), որ, ըստ վերծանողի, տվյալ միջավայրում կարող էր
արտահայտել խաչմերուկ իմաստը дома на перекрестке Потаёного вхо-
да...¹⁹:

Թվում է, Ն. Մառի այս վերծանությունը և մեկնությունը այնքան էլ հա-
մողիչ չէ և հավանաբար գալիս է խեչ բառի ոչ ստույգ ըմբռնմանից: Վերևում
նշեցինք, որ խեչ, խեչ միջին հայերենում և արդի բարբառներում շատ տարած-
ված բառ է և արտահայտում է մի շարք իմաստներ, որոնցից ամենահիմնա-
կանը կոչտ, մերձ, մոտ, կից, բով նշանակությունն է, որով և նա հանդես է
գալիս քննվող վիմագրում²⁰: Այստեղից, Բագնայրի արձանագրության՝ տներն...
ի Գաղտ դռանն խեչ երեւ նախադասությունը պետք է հասկանալ՝ Գաղտ դը-
ռան մոտի տները տվեց կամ՝ Գաղտ դռան մոտ (գտնվող) տները տվեց:

Դ. ՀԱՅՄ ԱՅԼ

Այս բառակապակցությունը հիշատակվում է Մրենում պարոն Սենոպ Սահ-
մադինի թողած 21 է (1288) թ. արձանագրության մեջ, որով հեղինակը գիշում
է Մրենի բնակիչներից գանձվող մի քանի հարկեր: Բնագրի համապատասխան
հատվածը մեջ ենք բերում մեր ընդօրինակությամբ, որ կատարել ենք պատ-
մական թանգարանում պահվող սև ապակու վրայից. ես՝ պարոն Սենոպ Սահ-
մադինս և ամուսին իմ Ռոմուտա վասն փրկութեան մեղաց մեր... Մրենոյ հա-
ցին շարխաւն թողել էաք և հայմ այլ թողաք գէգեցն գինն և խաղողի խալէն²¹:

Ինչպես հասկանալ այս արտոնագրում հստակ կարդացվող հայմ այլ
(հայմայլ) բառը, որ նախորդ ընդօրինակողների մոտ վերծանված է հայմալ:

17 Ն. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 184, ԱԼԻԶԱՆ, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 118:

18 Н. Э м п н, Армянские надписи..., стр. 61.

19 Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, Առաջարան, էջ 3:

20 Հ. Աճառյան, Հայ գավառական բառարան, էջ 464, Ս. Ամատունի, Հայոց
բառ ու բան, էջմիածին, 1912, էջ 274:

21 Հրատարակությունը տե՛ս Ն. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 199, И. Орбелин,
Надписи Мрена (անտիպ ժողովածու), էջ 5: Ն. Սարգիսյանի գրքում ի շարս այլ տարբը-
թեքումների, հայմ այլ տառաշարքը վերծանված է հայ մալ կամ հայմալ առանց մեկնելու
նշանակությունը: Հ. Օրբելու վերծանությունը ստույգ է՝ հայմ այլ:

Բառա գրական հայերենում չի հանդիպում և տեղ չի գտել բառարաններում. նրա արտահայտած իմաստը կարելի է մակաբերել մեջ բերված բարդ նախադասության վերլուծությունից. հացի շաբիաժը թողել էինք և հայմ այլ թողեցինք այգիների զինու և խաղողի խալան, այսինքն շարիատը թողնելուց հետո նաև, նույն ձևով, նույնպես, նմանապես թողնվում է խալան, որտեղ հայմ այլ կարող էր նշանակել՝ նույնպես, նույն ձևով, նմանապես, միաժամանակ և այլն:

Ակնհայտ է, որ հայմ այլ մակբայը դրված է թողաք ստորոգյալի վրա և տվյալ դեպքում ցույց է տալիս այդ գործողության կատարման հանգամանքը, պարագան. ինչպես թողար՝ նույն ձևով, նույնպես, միաժամանակ և այլն:

Հայմ այլ կապակցության ստուգաբանությունը ևս հաստատում է այս կռահումը, ըստ այդմ, հայմ այլ հարադրություն է, առաջացած պարս. *haft* (բրդ. *heft*) = նույն, նման, ամբողջ, միասին, միատեղ և հայ այլ (բարբառներում և միջին հայերենում՝ ալ = ևս, ուրիշ, մեացած) բառերից²², համալի հայմայլ = նույնպես, միաժամանակ (հմմտ. բարբառներում հայմ ալլ > համել = նույնպես, նաև, նմանապես):

Ե. ՇԱՀ ՈՒ ԶԵՆ

Պատմական Հայաստանի հյուսիսային գավառների, հատկապես Լոռու մի շարք հուշարձանների վիժական արձանագրություններում քանիցս կարդացվում է այս կապակցությունը՝ հոգևոր կենտրոններին նվիրաբերված հողամասերի կամ ճորտ-շինականների հետ՝ իբրև նվիրատվությունը բնութագրող հատկանիշ:

Նախկինում այդ հիշատակությունները վերծանվել ու հրատարակվել են զդալի անճշտություններով, որ դժվարացրել է նրանց մեկնությունը և տեղիք տվել աարբեր ըմբռնումների, ուստի պատեհ ենք համարում մեջ բերել շահ ու ղեն(ով) վկայությունները՝ ավելի հավաստի ընդօրինակություններով: Սանահնի վանքում, ՈԿԳ (1214) թ. ես՝ Վասակ ետու... Գործունեք շինական յագատ ի զԱբխալմանց հաղն ամեն շահ ու ղենով...: Նույն վանքում, ՈԿԳ (1215) թ. ...եւ որդի նորա Սմբատ եւ ամուսինն Աղուտ ետուն ի Մղաբղն զԱբխալմանց հայրենիքն ամենայն շահ ու ղենով, Ածածինս եւ: Խ: աւրավար հող...²³: Այստեղ հիշատակված նվիրատու Աղուտը դրանից 14 տարի առաջ (ՈԾ 1201 թ.) Լոռու Մղարթ գյուղում իր կանգնեցրած խաչարձանի հիշատակագրության մեջ արդեն կատարել էր համարյա նույն նվիրաբերությունը՝ իր ամուսին Սարգսի և հոր՝ Նաջմադինի բարեխոսության համար. Ես՝ Աղուտս, դուստր Նաջմադինին, ամուսին Սարգսի եւ մայր Մամնային ի նացա պակասմանն տուաք ի Սանահնին նացա հոգոյն զԱբխալմանց ամեն շահ ու ղենով եւ: Ին: աւրավար հող...²⁴: Ինչպես ակնհայտ է, երկու նվիրագրերի տարբերությունը սոսկ նվիրված հողի քանակությունն է, որ մի դեպքում: Խ: (40) օրավար է, իսկ վերջին բնագրում՝ Ին: (25): Նույն Սանահնի վանքի 1210-ական թվականների մի ընծայագրում՝ Ես Վասակ և ամուսին իմ Խաթուն տուաք յԱծածինս... զՄուսէս՝ Մարգարէին որդին իւր շահ ու ղենով...: Սանահնի վանքում,

²² Հ. Ա ճ ա ո յ ա ն, Հայերեն արձանագրության բառարան, Երևան, 1930, հ. Դ, էջ 52:

²³ Կ. Ղ ա Ֆ ա դ ա Ր յ ա ն, Սանահնի վանքը..., էջ 122, 174:

²⁴ Ա. Շ ա հ ի ն յ ա ն, Մամիկոնյան—Համաղասպյան տոհմը հյուսիսային Հայաստանում XII—XIII դարերում, («Լրաբեր», 1968, № 3, էջ 85):

ՈՀ (1221) Թ. Ես՝ Հասան եւ Վախախ ամուսին իմ տվաք ի Անանիսին ի Սա-
ղեռոյն զՇատարեանք ամեն շանով, մին արավար հող...: Սանահնի վանքում,
ՈԿԶ (1217 թ.) Ես՝ Գաւրգի, որդի Աշոտոյ ետու իմ որդովս զիմ բուն հայրե-
նիս զԼորիսն՝ իւր ամեն շան ու զենով...²⁵: Մի վերջին վկայություն էլ, փոքր-
ինչ այլ կազմությամբ հանդիպում է Օձունի տաճարի հարավային մույթին փո-
րագրված՝ ձեռնաւոր Սմբատի արձանագրության մեջ. Ես՝ Սմբատ, ծառա մե-
ծին Խվանէի եւ Միսաքօձեյի, որդի Ճողենց Պողոսոյ, որ արժանի էրա Ունա
ձեռնվորութեան, պարտեացն արեւլատութեան համար զձեռնվորեան... անշան
ու զեն ի վեր կալա...²⁶:

Արդ, ինչպես հասկանալ այս բնագրերում հստակ կարգացվող շան ու
զեն (ով), (ան) շան ու զեն բարդությունը: Բրոսեն Սանահնի և Հաղբատի ար-
ձանագրությունների՝ Հովհաննես Ղրիմեցու կազմած ժողովածուում՝ Սանահնի
հիշյալ նվիրագրերի շան ու զենով կապակցությունը բոլոր երեք դեպքերում էլ
թարգմանում է со всеми угодьями и инструментами²⁷, որ չի հաստատվում
բառաքնորեն և ընդհանուր քիչ բան ունի բնագրի հետ: Հեղինակի վրիպումը
հավանաբար գալիս է զեն(ով) ձևի ոչ ստույգ մեկնությունից, ըստ որի բառս
դիտվում է իբրև զեն=զենք, զրան արմատի գործիական հոլոված, թեև այս
դեպքում գործիական հոլովում սպասելի էր օրինաչափ՝ զեն>զինու և ոչ զենով:

Դիտելի է, որ շան ու զեն (ով) բաղադրական հարադրությունը դրվում է
կամ նվիրագրված հողամասերի, հայրենիքի վրա, ցույց տալու համար այդ
ոմնեցվածքի օգուտների և ծախսումների վիճակը նվիրելու միջոցին, կամ նրա-
նով բնութագրվում է հոգևոր կենտրոնին ընծայվող աշխատավոր շինականը՝
նպատակ ունենալով ներկայացնել նրա պարտքն ու պահանջը, օգուտն ու վնա-
սը և, վերջապես, Օձունի բնագրում ձեռնվորեաները՝ հարկահան պաշտոն-
յալի օգուտն գանձվող հասույթը, վերացվում է (ան) շան ու զեն, այսինքն ձեռ-
նաւոր Սմբատը դրանով ցանկանում է շեշտել, որ հարկը վերացնում է առանց
որևէ վերապահության կամ պարտավորության, սույն բարեգործական մղումով:

Շան ու զեն հարադրական բարդության իմաստը վկայված իրադրության
մեջ, ճիշտ է առանց ստուգաբանության, բայց հավաստի է մեկնում պրոֆ. Կ.
Ղաֆադարյանը, զՄուսէս՝ Մարգարէին որդին իւր շան ու զենով օրինակում
տվյալ կապակցությունը բացատրելով՝ Մուսէսն իւր օգուտովն ու վնասովը, որ
միանգամայն նույնական է բնագրին:

Շան ու զեն բարդության զեն բաղադրիչի ստուգաբանության համար պետք
է նկատի ունենալ ոչ թե զեն=զենք, զրան արմատը, այլ զեն=զոն բառը, որ
մատենագրության մեջ առանձին կիրառությամբ վկայված չէ և գործածվում
է միայն զեն (ով)=մորթել, զոնել, զեն (ուսն), զեն(լի) և մի քանի այլ կազ-
մություններում: Զեն=զոն արմատի ծագումը, առանց որևէ վկայության, Հ.
Աճառյանը դնում է պհլ. zivan =զնդ. zyanā ձևից, որ հայերենում տառա-
դարձվում է զեան, իսկ բարդության մեջ՝ զեն (զեան>զեն) և նշանակում է
վնաս²⁸: Այսպիսով, միայն վիճական բնագրերում ավանդվել է զեն=վնաս,

²⁵ Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 123, 128, 133:

²⁶ Առնում ենք մեր հավաքածուից:

²⁷ И. Крымский, Описание..., стр. 56—58.

²⁸ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, էջ 933, Հ. Վարդանյան, Բառաքնական նոր դիտողություններ, ՀԱ, 1914, 2-րդ, էջ 124:

զոհ արմատը կամ նրա գործիական հոլովածը՝ շան ու զենով, անշան ու զեն րարդության մեջ:

Ահա այս իմաստով էլ զեն բառը հանդես է գալիս շան ու զեն (ով), (ան) շան ու զեն հարադրական բարդության մեջ՝ նշանակելով որևէ ունեցվածք՝ իր օգուտով և վնասով կամ առանց օգուտի և վնասի:

2. ՍՈ, ԿՕ, ԱՔ (°)

Այս անորոշ գրերը վերծանված են վաղամեծիկ Վասակի փոքրիկ, հարթ տապանաքարի վրա (80×38 սմ), որը գտնվում է Սանահնի վանքի Ամենափրկիչ եկեղեցու գավթի հատակին, հարավ-արևմտյան սյան մոտ:

Տապանաքարի համառոտ նկարագիրը, նրա երեսին քանդակված մարգապատկերն ու կարճառոտ արձանագրությունները, գծագրական պատշաճ ընդօրինակությամբ, առաջին անգամ հրատարակել է պրոֆ. Կ. Ղաֆադարյանը: Տապանաքարի լուսանկարը չի ղեկեղված գրքում, սակայն կան հուշարձանի գծագրական ընդօրինակությունը և համառոտ նկարագրությունը, որոնք ընդհանուր պատկերացում են տալիս իրականի մասին: Սակայն այդ նկարագրության մեջ հանդիպում է մի էական անճշտություն, որի պարզաբանումը կարևոր է Վասակի ով լինելը որոշելու և եղած արձանագրությունները մեկնելու տեսակետից:

Նկարագրելով մարգապատկերի հանդերձանքը, վերծանողը գրում է. «Զգեստը երկար, ծնկներից ներքև է հասնում, մեջքին՝ գոտի, իսկ գոտուց կախված է մի բանալի, որը հավանաբար պաշտոնն է մատնանշում»²⁹, Եվ իրոք, տապանաքարի գծագրում աչքի է ընկնում իշխանի ձախ կողմում, գոտուց կախ տված մեծ շափերի, խիստ արդիական մի բանալի: Մեզ թվում է տապանաքարի վրա և նրա լուսանկարում երևում է ոչ թե պաշտոն կամ այլ բան մատնանշող բանալի, այլ՝ երաժշտական գործիք, քամանչա հիշեցնող մի նվագարան, որ կախված չէ պատանու գոտուց, այլ՝ իբրև նրան պատկանող առարկա դրված է պատկերի աջ կողմում քանդակված պնակիտի կողքին: Նվագարանը վարպետությամբ է քանդակված և իրական տպավորություն է առաջացնում. պարզ երևում են ոչ միայն գործիքի փոքր-ինչ ձվաձև մասը՝ բարակ հենակով, այլև՝ լարերը կոթին ամրացնելու հարմարանքները՝ ականջիկները, որոնք տեղավորված են կոթի երկու կողմերին:

Տապանաքարի տառաձևերը ևս վերծանողի կողմից լրիվ չեն արտագրվել. այսպես, մարգապատկերի գլխի աջ ու ձախ կողմերում, ՎԱ և ՍԿ գրերից վերև կարդացվում են համապատասխանաբար ՊՐ, ՈՆ գրերը, որոնք չեն նրկատվել և անշուշտ կազմում են աղաքոն բառի հարավված պատկերը: Պնակիտ հիշեցնող քառանկյունու վերևում, ձախից փորագրված Թ գիրը նույնպես աննրկա է մնացել և հավանաբար հուշարձանի անավարտ թվագրի սկիզբն է: Մեջ բերելով սկանկիտի վրա փորագրված ՍՈ, ԿՕ, ԱՔ եռատող գրերը, հեղինակը դրանց մասին նշում է. «Թվում է պատահական գրեր են և որևէ իմաստ չունեն»։ Իրականում, առաջին տողի գրերը կարդացվում են ոչ թե սո այլ՝ սաբ, ուստի և ամբողջ եռատողը կարելի է վերծանել սաբկօաբ = սաբկաաբ:

29 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը..., էջ 119:

Բառիս սարկօաֆ գրությունը, այսինքն ձայնավորից առաջ կամ բաց վանկում աւ հնչյունակապակցության փոխարեն օ գիրը սովորական է նույն ժամանակների հայկական ձեռագրերում ու վիմագրության մեջ և առաջանում է նորամոտ օ գրի ոչ ճիշտ կիրառությունից, որը հաճախ էր գիտվում սկզբնական շրջանում: Հենց նույն Սանահնի վանքի № 43 արձանագրության մեջ փաւաւան



բառը փոխադրված է ֆօւաւան ձևով³⁰: Օրինաչափ է նաև բառիս վերջնահանգ ֆ-ի գրությունը, որ արտացոլում է գ ձայնեղ պայթական հնչյունի խլացման ու շնչեղացման պատմական հնչյունափոխությունը:

³⁰ Նույն տեղում, էջ 120: Հեղինակը բաղաձայնից առաջ աւ երկբարբառի փոխարեն օ փոխառյալ գրի կիրառության հնագույն վկայությունը համարում է 1520 թ. մի արձանագրության մեջ Սօլաղա անձանունը (նույն տեղում, էջ 101), գտնելով, որ օ գիրը գործածություն չունի նույնիսկ XIV և XV դդ. արձանագրություններում (էջ 76): Այս կարծիքի հետ չի կարելի համաձայնել, քանի որ հայտնի են տվյալ դիրքում աւ երբեմնի երկբարբառի փոխարեն օ-ի գրության ավելի հին վկայություններ: Հենց նույն Սանահնի վանքի ՊԵ (1356) թվակիր բնագիրը ինքը՝ պրոֆ. Կ. Ղաֆադարյանը ընդօրինակել է կապադոկից օճին յնյ (նույն տեղում, էջ 152): Օ գրի մեղ ծանոթ հնագույն վկայությունը գտնում ենք Հալիձորի խաչքարի արձանագրության մեջ՝ հօրե, մօրե ձևերով, որը փոխադրվել է մինչև 1260 թ. (տե՛ս Դիվան, պրակ 2, էջ 53):

Այսպիսով, քննության ենթակա տառաշարքը մեր շտկումներից և լրացումներից հետո վերծանվում է ՊՄՐՈՆ ՎԱՄՎԱԿ

Թ.... ՍԱՐԿՈՒՔ (ՍԱՐԿԱԻԱԳ)

Այստեղից ակնհայտ է դառնում, որ Սանահնի գավթի հատակին թաղված պարոն Վասակը հոգևոր կամ աշխարհիկ պաշտոնյա չէ, ինչպես ենթադրել է վերծանողը։ Վաստկի տապանաքարի վրա փորագրված անձնական առարկաները՝ «յնակիտը» սաբկաուգ մակագրությամբ և նվագարանը չեն մատնանշում նրա պաշտոնը, այլ վկայում են իշխանազն պատանու աշխարհիկ հետաքրքրությունների, ուսումնատենչության և երաժշտական հակումների մասին։

Է. ՍՏԱՂԱՅ, ԹԵՐ ԳԵՏԱՂԱՅ

Անհում Ձաքարիա ամիրսպասալարի կառուցած եկեղեցու հարավային պատին, արտաքուստ փորագրված է կառուցողի շինարարական-նվիրատվական արձանագրությունը, որտեղ այլ ընծաների թվում ընթերցվում է նաև (գ) ստաղաց ինքնուրույն տառաշարքը։ Արձանագրված քարերը, որոնց վրա եղել են առաջին հինգ տողերի սկզբի մասերը, չեն պահպանվել, վնասված են մի քանի այլ քարեր ևս, և այդ պատճառով բնագիրը լիակատար ու սպառիչ վերծանության չի ենթարկվում։ Սակայն նրա հիմնական բովանդակությունը և հատկապես քննության առարկա բառի վկայությունը հնարավոր է վերականգնել հենց հրատարակված լուսանկարի վրայից։ Բերենք այդ հատվածը Հ. Օրբելու ընդօրինակությամբ... էաու նուէր ընծաից... ակն մի ջաղաց յԱպրեմուց ձորին եւ Աբռէն։ Դ։ դրամ ի լուսացրաց... եւ զստաղաց եւ զձորաղաց ջաղացաւնոյն ծառաութիւնն...³¹։

Ակներե է, որ այստեղ (գ) ստաղաց-ը անսովոր կազմություն է հայերենի բառամթերքում և հավանաբար տարընթերցման արդյունք։ Արձանագրության լուսանկարի վրա նորից զննելով պահպանված տառաձևերը համոզվում ենք, որ զստաղաց շարքը ստույգ չի կարդացվել և այստեղ հնարավոր է նաև զգետաղաց ընթերցումը. պարզ երևում է գ գրի փոքր-ինչ վնասված գլխիկը և հորիզոնական գծիկը, իսկ ե-ն ալիլի հստակ է կարդացվում և կասկած չի առաջացնում, թեև ներքևի կիսակլոր ստեղծող զգալի չափով վնասված է։ Զգե գրերի և տաղաց շարքի միջև սովորականից ալիլի մեծ տարածություն է թողնված, քանի որ այդտեղով է անցնում երկու քարերի միացման գիծը և փորագրողը խուսափել է այդ գծի վրա տեղավորել տ գիրը։

Եթե մեր այս վերականգնումը (զգետաղաց) արդարացված է, ուրեմն արձանագրության այդ հատվածը կարելի է հասկանալ այն իմաստով, որ Ձաքարիան իր շինած եկեղեցուն նվիրել է զգետաղաց և զձորաղաց ջաղացաւնոյն ծառաութիւնն, այսինքն երկու ջրաղացների ծառայությունը՝ կապալավարձը, աղունավարձը, ոչ թե այդ ջրաղացներն առհավետ, այլ նրանց եկամուտը միայն, դուցե մի որոշ ժամանակամիջոցում, որի մասին բնագրում չի նշված։

Հազիվ թե հնարավոր լինի զգետաղաց կամ ձորաղաց անվանումների տակ հասկանալ այդ ձեռնարկությունների որակական հատկանիշը կամ նրանց ար-

³¹ Հ. Օրբելի, Դիվան հայ վիճագրություն, պրակ I, Երևան, 1966, էջ 58։

տագրանքի տարբերությունը: Ավելի հավանական է մտածել, թե արձանագրողը ցանկացել է այդ բառերով ցույց տալ հիշյալ շրաղացների գտնված տեղը կամ մատնանշել, թե որ շրաղացների աղուեավարձն է (ծառառութիւն) նվիրում վանքին (գետի աղաց, ձորի աղաց), ինչպես որ նույն արձանագրության մեջ մի այլ նվիրված շրաղացի մասին ասվում է. ալև մի ջաղաց յԱպրնուց ձորին, այսինքն Ապարանքի ձորում գտնվող շրաղացի մի աչքը:

РАЗЫСКАНИЯ ПО ЛЕКСИКЕ АРМЯНСКИХ НАДПИСЕЙ

С. А. АВАКЯН

Р е з ю м е

В эпиграфических текстах средних веков сохранились слова и термины, не засвидетельствованные в письменных источниках и имеющие важное значение для исследования социально-экономической жизни средневековой Армении, в частности для изучения податной системы средних веков. В прежних публикациях свидетельства этих терминов были дешифрованы с существенными неточностями, что затрудняло их достоверную этимологию и интерпретацию.

В работе на основании новых, идентичных дешифровок надписей предлагается толкования некоторых податных терминов периода монгольского владычества (*խախաշ*, *խեշ*, *հայմ աղ*, *շահ ու զեն* и т. д.).